

Մեծագույն անկյուն

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Ճարտարանք

$N \times N$ չափի աղյուսակի յուրաքանչյուր վանդակում գրված է մեկ ամբողջ թիվ: Աղյուսակի յուրաքանչյուր վանդակի համար K երկարության անկյուն անվանենք այդ վանդակից աջ գտնվող ինդեքսների աճման կարգով նույն տողում գտնվող հաջորդական K վանդակները և այդ վանդակից ներքև ինդեքսների աճման կարգով նույն սյունում գտնվող վանդակները, ինչպես նաև այդ վանդակը: Եթե տվյալ վանդակից աջ և/կամ ներքև K հատ վանդակ չկա, պետք է վերցնել մինչև տողի վերջը / մինչև սյան վերջը բոլոր վանդակները:

Հարկավոր է գտնել աղյուսակի այն վանդակը, որի K երկարության անկյան վանդակներում գրված թվերի գումարը մեծագույնն է: Պետք է արտածել այդ վանդակի կոորդինատները:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են N և K ($N \leq 1000$, $1 \leq K \leq N/2$) ամբողջ թվերը: Հաջորդ N տողերից յուրաքանչյուրը պարունակում է, իրարից մեկական բացատանիշով անջատված, N ամբողջ թվեր՝ աղյուսակի վանդակների արժեքները: Այդ բոլոր թվերը -10000 -ից 10000 սահմաններում են:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ բացատանիշով իրարից անջատված երկու թիվ՝ մեծագույն գումարով վանդակի տողի համարը և սյան համարը: Եթե այդպիսի մի քանի վանդակներ կան, պետք է ընտրել այն, որի տողի համարը փոքրագույնն է, իսկ եթե նույն տողում մի քանի այդպիսի վանդակ կա, պետք է ընտրել այն, որի սյան համարն փոքրագույնն է:

Օրինակ

Մուտք	Ելք
6 3 1 2 6 9 -1 0 1 3 -5 0 2 8 6 2 2 -7 3 1 5 5 -3 7 -2 4 1 1 1 12 0 6 -2 3 7 10 2 1	4 4